

ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միջին խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Փ օ ն № 253.

Խմագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Փ օ ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Բ Գ Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ԲՈՎԱՆԳՆԱԿՈՒԹԻՒՆ

Հեռագրերը. Հայոց հարցը և դիտարկումներ.
Մարկից Սուրբերիի ձառը. Անգլիական մամուլը
և հայոց հարցը. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատե-
նագրութիւն. Նամակ Պետերբուրգից. Նամակ
Մոսկուայից. Նամակ Վաղարշապատից. Նամակ
Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներ-
քին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կերպոնի
ձառը. Նամակ Աւստրիայից.—ՀԻՆԳՇԱԲԹԻՆԻՐ.—
ԲՈՐՄԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ. Թիւրքիայի ծովեզերքից.

Հ Ե Ռ Ա Գ Ի Բ Ն Ե Ր

(Ռուսաց գործակալութեան)

Բերլին, 7 նոյեմբերի. «Կեօյնի Լրա-
դիրը» հարգում է, որ գերմանական կա-
ռուկարութիւնը, պետութիւններին կոմս
Գօլուսովսկիի կողմից արած առաջարկու-
թիւնները հետ համարեա միաժամանակի
իր պարզեց համարեց խորհուրդ տալ
սուլթանին ուղարկութեան առեւել պետու-
թիւնների ստրկողական պահանջները և
ճայրայել ջանքեր գործ դնել՝ կարգը վե-
րականգնելու համար փոքր-Ասիայում: Գեր-
մանական կառավարութիւնը չէր ծած-
կում, որ Եւրոպայում գնալով տարածվում
է այն կարծիքը, որ այժմեան անիշխանա-
կան դրութեան շարունակութիւնը Թիւր-
քիայում համապատասխան չէ եւրոպական
շահերին: Մտադրված պատասխանից երե-
ւում է, որ սուլթանը կատարելով հաս-
կանում է դրութեան ծանրութիւնը:

Կ. Պօլիս, 7 նոյեմբերի. Հիւսիսային Սի-
բիրայում թշնամական շարժումը դեպի քրիս-
տոնեաները շարունակվում է: Հարգում է
են նոր կատարածին մասին Հայէպի շրջա-
կաններում: Զօրքի սպառազինումը շարունակ-
վում է, որքան ներում են ֆինանսական
դժուարութիւնները: Եթէր նաևը զօրքեր
են փոխարկում դեպի Ալեքսանդրէտտա:
Չեռք են առնված միջոցներ կարգը վերա-
կանգնելու համար էրզրումի վիլայէտում:
Կա ընդհարում առաջ բերեց թիւրքաց
զօրքերի և քրիստոնէի մէջ: Հարգում է
սարսափելի աւերմանները մասին, որ կա-
տարել են վեց վիլայէտների քրիստոնէ
Կերպոնի և Արաշկերտի շրջականերում:

Վիեննա, 8 նոյեմբերի. Պետութիւննե-
րի հաւաքական գործողութեան մասին
Արևելքում՝ «Neue Freie Presse» հա-
ղորդում է. «Ռուսաստանը յայտնեց, որ չէ
կարող ընդունել Գօլուսովսկու առաջար-

կութիւնը. բայց այս պատճառով հարկաւոր
չէ կարծել, թէ բաւարար ելքը անխաղա-
կեպ է համարել: Համարձակութիւն չի
լինի յուսալ, որ Գերմանիան այն դեպքում,
եթէ քաղաքական հարցերը միջին—որ
սակայն շատ քիչ հաւանական է—կը յայտ-
նէ իր կարծիքը:

«Այս տեղեկութեան վերաբերմամբ պաշ-
տօնական «Fremdenblatt» լրագիրը նը-
կատում է. «Ռուսաստանը առանձին նշա-
նակութիւն է ապիս բոլոր պետութիւննե-
րի միահամուռ գործողութեան: Սկզբուն-
քով նա համաձայն է Կ. Պօլսում աւերաց-
ներու պահանջներին թիւրք, և ինքն
առաջինն եղաւ, որ կարգադրեց այնտեղ
ուղարկել երկրորդ պատերազմական նաւը:
Այսպէս ուրեմն Ռուսաստանն իրապէս միւս
պետութիւնների հետ միևնոյն ուղղու-
թեանն է հետևում, ինչպէս և սկզբունքով
նա ընդհանրապէս համաձայն է նրանց
հետ: Ոչ մի պետութիւն այնպէս եռան-
դուն կերպով չէր պահանջում հայկական
խտնակութիւնների դաւարումը՝ ինչպէս
Ռուսաստանը: Այս տեսակետից ուսուս
կառավարութիւնը ամենամեծ օրինակա-
հովութեամբ միացաւ Աւստրո-Ունգարիայի ա-
ռաջարկութիւններին: Ռուսաստանի հա-
յեացքները Աւստրո-Ունգարիայի կառավա-
րութեան հայեարեցքների տարբերում են
միայն առաջարկված միջոցները իրադր-
ծելու եղանակի նկատմամբ»:

ՀԱՅՈՑ ՀԱՄԱՐ ԵՒ ԳԻՊՈՒՄՏԱՅԱ

Ձէյթունի արտադրութիւնը
Ձէյթունի գործերի մասին Լօնդոնի թիւրքաց
գետաբանութիւնը հետեւեալ տեղեկութիւններն է
ստացել: «Հայկական արտադրութեան լուրը
Ձէյթունի շրջանում հաստատվում է: Այդ շրջանը
լեռնոտ է և խիտ հայ ազգաբնակչութիւն ունի:
Թիւրքերը այնտեղ փոքրամասնութիւն են կազ-
մում և այդ պատճառով ենթարկվում են հայերի
ամեն տեսակ բռնութիւններին: Այսպատեւ
թիւրք ճնշակու համար երկի բազմակի զօրա-
բաժին կը պահանջվի: Կարծում են, որ թիւրքաց
զօրքերը զօրեղ դիմադրութեան կը հանդիպեն,
որովհետև թշնամին լաւ դիմադրված է և դիտէ
պատերազմական գործը: Հաստատում են, որ
հայ եպիսկոպոսը կարգադրեց եկեղեցիները և

վանքերը բերդերի փոխարկել և նրանց մէջ կենտ-
րօնացրեց վատօղի և մթերքների մեծ պաշար-
ներ»:

Օգնական զօրքեր

Կ. Պօլսից հեռագրում են, որ «Babel» նաւով
Զմիւռնիայից պէտք է օգնական զօրքեր ուղարկ-
վին Ալեքսանդրէտտա, որոնք պէտք է միանան
Ձէյթունում և Մարաշում գործող զօրքերին:

Գերմանիայի միջնորդութիւնը

«New York Herald» լրագիրն Բերլինից հա-
ղորդում են, որ Բ. Գուռը զիմեց գերմանական
կառավարութեանը՝ ինչպէս լրջ միջնորդի դեր կա-
տարելու:

Սպանիալիքի հետեւանքը

Պարիզից հեռագրում են. «Երբ ֆրանսիական
գետական կամբօն իմացաւ, որ Գիւրբեքերի ֆը-
րանսիական հիւպատոսութեանը վտանգ է սպառ-
նում, իսկոյն յայտնեց Բ. Գրանը, որ եթէ հիւ-
պատոսութիւնը վնասվի, ինքն կը պահանջի վա-
րկի դուլը և ֆրանսիական զօրքերով կը դրաւի
Ալեքսանդրէտտա: Կա դեռ. ֆրանսիական ժամանակն
էր: Վարեցած վիզիրը վաղեց պալատ, և երկու
ժամից յետոյ հանդատութիւն էր տրուում Գիւր-
բեքերում»:

Հայաստանի գրաւումը

«Nord» լրագիր մէջ տպված է հետեւեալ նկա-
տողութիւնը. «Անգլիական և աւստրիական լրա-
գիրները վերադարձեցին իրանց նախկին առակ-
ները այն բանի մասին, որ իբր թէ մեծ պետու-
թիւնները թոյլ են տալիս Ռուսաստանին զօր-
քերով գրաւել Հայաստանը: Ռուսաստանը եր-
բէք չէ ձգտել, մի քանի ուրիշ պետութիւնների
նման, ձեռք գցել օսմանեան նահանգները իբր
թէ բազմաթիւական գրաւման պատրուակով
և այժմ էլ ամենին չէ մտածում իր վրա վերջ-
նել մի այդպիսի բեռ: Նա մինչև անգամ կատա-
րելու է անօգուտ է համարում թիւրքաց Հա-
յաստանի գրաւումը եւրոպական զօրքերով, որով-
հետև Բ. Գրան կարգադրութեան ներքոյ դրուվում
են բաւարար թւով զօրքեր՝ երկիրը խաղաղացնե-
լու և կարգ վերանստատեալու համար, որ ինան-
դարում են այն էմիգրաները, որոնց չեն դադա-
րում ուղարկել այնտեղ Լօնդոնի կոմիտէաները»:

Վ. Ե. Լ. Ն. Դ. Ե. Բ. Ե. Բ.

«Daily News» լրագիր Կ. Պօլսի թղթակիցը
նոյեմբերի 7-ից հարգում է. «Ձէյթունի վերա-
բերեալ վերջին տեղեկութիւններից երևում է,

որ թիւրքաց զօրքը դեռ տեղ չէ հասել և չէ ա-
զատել պաշարված թիւրք զինուորներին: Քիւրդե-
րը այժմ այրում են խարբերի շուրջ եղած գիւ-
ղերը: Եւրոպացիները սաստիկ երկիւղ են կրում
այնտեղ եղած իրանց ազգականների մասին:
Գաղտնագիր մի նամակ, որ ստացված է կրդն-
կայից, հարցրում է, որ այնտեղ կոտորվել է
մինչև 2,000 հայ»:

Ժողով

Նոյեմբերի 6-ին Կ. Պօլսում տեղի ունեցաւ
միացեալ ժողովը, որ կազմել էին թիւրքաց մի-
նիստները մեծ պետութիւնների ներկայացու-
ցիչներին հետ, և որը զբաղված էր վերջին անց-
քերի քննութեամբ: Պետութիւնները յիշեցնելով
1860 թվի եւրոպական զօրքերի Միւրիա դուրս
բերելը, յայտնեցին, որ նոյնը կարող է տեղի ու-
նենալ այժմ, եթէ հաստատ միջոցներ գործ չը
զբվին կոտորածներին վերջ տալու:

ՄԱՐԿԻՉ ՍՈՒՍԵՒԹԻՒՆ ԶԱՌԸ

(Հայոց հարցի մասին)

Նոյեմբերի 9-ին (նոր տոմարով) չարաթ օր,
բրիտանական մինիստր-նախագահ Սոլսբիւրի
Լօրդէր Վիլիսի բանկետում հետեւեալ ձառն
արտասանեց,

«Պարոններ. Անցեալ տարվայ ընթացքում
մեզ մեծ հոգս էին պատճառում հեռու Արևել-
քում տեղի ունեցած անցքերը: Ես յոյս ունեմ,
որ այդ երկրներում խաղաղութիւնը վերականգն-
ված կը լինի, յոյս ունեմ, որ մեր բոլոր երկիւղ-
ները արևելեան-ասիական անցքերի վերաբեր-
մամբ ի դերս կհենին:

«Տեղեկութիւններ արտաքին քաղաքականու-
թեան շրջանից, առհասարակ, մեզ առանձնապէս
չեն յուզում կամ անհանդուրժելի չեն պատ-
ճառում, բայց հեռու Արևելքում տեղի ունեցող
անցքերին մենք անբողջ տարին հետևում էինք
մեծ հետաքրքրութեամբ: Այժմ կուր վերջացած
է: Եւ հաւատացեք ինձ, ինչ էլ պատահէր այդ
երկրներում, զինուորական թէ աւտարական տե-
սակէտից, մենք միշտ ուշ կունենանք դիմադրու-
թիւն ցոյց տալ մեր այն մրցակիցներին, որոնք
կարող են երևան գալ: (Միտարարութիւններ):
«Բայց կայ այնպիսի մի ուրիշ մաս, ուր
գործերի դրութիւնը այնքան հանդիսա և յուսա-
լի չէ, որպէս հեռու Արևելքում:
«Հայաստան խօսքը ահա արդէն մի քանի

Աւստրիան	>	>	2,300,000	>
Միւս երկրները միասին			1,200,000	>
Բուն թիւրքիային, որ Պարսկաստանի անմի- ջական դրացին է, այդ 17 միլիոնից բաժին է ընկնում միայն 100,000 ֆրանկ:				
Իսկ Պարսկաստանն ուղարկում է տրանսիլի' Տրապիզոնի վրայով, 8 միլիոն ֆրանկի ապրանք, Շալ և մետաքսեղէն			1,700,000	
Գորգեր			2,700,000	
Թէմբէքի			2,300,000	
Չամիչ			800,000	
Չանազան՝ այսինքն չոր միդր, դղտոր, ախիոն, բուրդ, խէթ և այլն			1,000,000	
Գումարը		8 միլիոն ֆրանկ		
Տրապիզոնի վրայով Հայաստան մտնում է տա- րեկան 20 միլիոն ֆրանկի ապրանք, որից՝ Անգլիան ուղարկում է (զլխաւորաբար մա- նուֆակտուրային ապրանք և ապա չափ ու եր- կաթեղէն)			8 1/2 միլ.	
Աւստրիա՝ (պատրաստի զգեստ, չաբար, չուլա)			33 1/4	>
Ֆրանսիա՝ (չաբար, կօֆէ, աւ- ւելէն և այլն)			2	>
Ռուսաստան՝ (կերտին, սպիրտ,				

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Թ Ի Ի Բ Ի Բ Ա Յ Ի Ծ Ո Վ Ե Զ Ե Բ Ի Զ

X

Տ ր ա պ ի զ օ ն

1877-ի ռուս-թիւրքական պատերազմից յետոյ
ինչպէս բովանդակ փոքր-Ասիայում, այնպէս և
Տրապիզոնում հայերի և թիւրքերի փոխադարձ
յարակերութիւնները լարվեցան, որ վերջերումս
քանի քնաց սաստկացան Սրանից առաջ Տրա-
պիզոնի թիւրքերը արդէն 2 անգամ փորձած
են քրիստոնեաներին ընաջինջ անել, բայց չա-
ջողեցան: Առաջին անգամ պատերազմի միջո-
ցին էր. թիւրքերի մի խումբ յարձակվեց քրիս-
տոնեաների աների վրա և սկսեց կոտորել, բայց
այս վերջինները պատասխարված լինելով աների
մէջ՝ մեծ ընդդիմութիւն ցոյց տուին և թիւրքերից
աւելի շատ մարդ ընկաւ: Միւս կողմից աղքեցիկ
Նէմիլ-օղլին մէջ մտաւ և արգելք եղաւ ընդհա-
նուր կոտորածին: Երկրորդ անգամ, արանից 6—7
ամիս առաջ էր: Արնաւուտ-օղլի անունով մի

հարուստ թիւրքի տանը հաւաքվեցան մասնեա-
կանների մօլլաները և զլխաւորները և ծրագիր
պատրաստեցին, թէ ինչպէս պէտք էր զգեստաւոր-
ներին՝ կոտորել: Եւ իրօք կը գործադրէին, եթէ
քաղաքի զինուորական հրամանատարը չը յայտա-
բարէր, թէ ինքն կանօնաւոր զօրք կը հանէ փո-
ղոցները քրիստոնեաներին պաշտպանելու և, եթէ
թիւրքերը յարձակվին՝ հրացանի կը բռնէ նը-
բանց: Այն ժամանակ զաւաղիւնների զլխաւոր՝
Արնաւուտ-օղլին կանչվեց Պօլիս, ամենքը կարծում
էին, որ բէկը կը պատժվի, բայց, ընդհակառակը,
Մէջիղին չքանչան առած ևս դարձաւ: Սակայն
սեպտեմբերի 21 և 26-ին արդէն իրբը տարբեր
հանգամանք ունէին: Սաստիկ զբոսում էր տի-
րում և թիւրքերը շատ լաւ դիտէին, որ կառա-
վարութիւնը պիտի չարգելէր և նրանք կանխա-
պէս պատրաստված, յանկարծ ամեն կողմից չըր-
ջապատեցին և ուղարկի չաբդ առաջ բերին
անգլէն հայերի մէջ, երբ ոչ մի առիթ չը կար
մէջտեղ այս վերջինների կողմից: Իսկ այս ան-
գամ զինուորական իշխանութիւնը՝ ինչպէս երե-
ւում է ստացված տեղեկութիւններից, ոչ թէ
միայն չէ խախտել կոտորածը, այլ ուղղակի
խրախուսել և առաջնորդել է փող ու թըրու-
կով...

Այժմ մի երկու խօսք էլ ընդհանրապէս Տրա-
պիզոնի աւտարական նշանակութեան մասին:
Տրապիզոնի զլխաւոր կարեւորութիւնը նրանումն
է կայանում, որ ամենամօտ դուռն է Երզրումի
և Ալեքսանդրի նահանգներին և մանաւանդ միջ-
նորդն է Պարսկաստանի աւտարի: 1883-ից ի
վեր, երբ կովկասից վերցվեց Պարսկաստանի
համար տրանզիտի իրաւունքը, Տրապիզոն
սկսեց առաջանալ որովհետև բոլոր ապրանք-
ներն այնուհետև այս կողմն ուղղվեցին և այժմ
փոխադրութեան միջոցները չեն բաւականա-
նում օրից օր աւելցող պահանջին: Ճիշդ հա-
չինների համաձայն՝ Տրապիզոնի վրայով Պարս-
կաստան մտնում են տարեկան 35—40,000 հակ
ապրանք, զլխաւորաբար.

Բամբակեղէն	10,000,000 ֆրանկ
Ատուղէն և բրդեղէն	2,500,000
Թէյ	1,200,000
Շաբար	1,000,000
Չանազան	2,800,000
Գումարը	17,500,000 ֆրանկ
Այս ապրանքից՝ Անգլիան տալիս է մօտ 12,000,000 ֆրանկ Ֆրանսիան >	> 2,000,000

ամիս է, որ զբաղեցնում է մեր մտքերը: Չեղ յայտնի է, որ ներկայ տարվայ մայիսին երեք մեծ պետությունների ղեկավարները, իրանց կառավարությունները ստացած հրահանգների հիման վրա, առաջարկեցին Բ. Գրանը մտցնել օրէնքների մէջ մի քանի փոփոխութիւններ՝ պաշտպանելու նպատակով հայերին այն սարսափելի տանջանքներից, որոնք խորը կերպով յուզեցին Անգլիան: Այդ առաջարկութիւնները եղել էին մեր նախորդների ժամանակ:

«Երեք ղեկավարների պահանջների միտքն այն էր, որպէս զի քրիստոնէայ պաշտօնականների մի որոշ թիւ մտցնելը վարչութեան մէջ, որ կատարւարում է այն նահանգները, ուր հայերը մեծ թւով են ապրում: Ինչ շատ անախորժ է, որ պետությունները կարող են գալ թիւրքի մի կրօն մի ուրիշ կրօնից աւելի պաշտպանելու դիտարկութեամբ: Այստեղ կարելի է մի այնպիսի ընդարձակ կայսրութիւն, որպէս բրիտանականն է, մենք ձեռնում ենք անպայման անկողնապահութեան սկզբունքներ: Թագուհին թագաւորում է մահմետականների աւելի մեծ թիւ վրա, քան թիւրքայ սուլթանը: Մենք պարտազանց կը լինէինք, եթէ զերազմէինք մի կրօն մի ուրիշ կրօնին: Մենք միշտ ցանկացել ենք միատեսակ արդարութեամբ վերաբերվել զէպի երկու կրօնների ներկայացուցիչներն ես:

«Ես երջանիկ կը լինեմ, եթէ Բ. Գրան արված առաջարկութիւնը լըէր բանակցութիւններից կողմնապահութեան որ և է նշուլ: Ես կարող եմ հաստատանել մեր մահմետական հայրենակիցներին, որ նրանք կարող են սպասել թագուհու կառավարութիւնից նոյնպիսի անկողնապահութիւն, որպիսին նրանք արդէն մի դարից աւելի վայելում են Հնդկաստանում:

«Մայիսին արված առաջարկութիւնները՝ իրանց էական գծերով ընդունվեցին սուլթանից: Ես աշխատեցի թիւթեացնել այդ գործը՝ առաջարկելով խառն վերահսկող յանձնատնօրով կազմակերպելու ծրագիր, բայց սուլթանը զերազմեց ղեկավարների առաջարկած խմբագրութիւնը իմից: Եթէ այդ թէֆօրմները իրագործվէին, կը ստանային հայերը ցանկալի բարօրութիւն, խաղաղութիւն և հանգստութիւն: Բայց արդեօք նրանք կարող են իրագործվել:

«Եթէ ինքն սուլթանը կարողանար համոզվել, թէ անհրաժեշտ է արգարութեամբ վերաբերվել զէպի հայերը, այն ժամանակ մի և նոյն կը լինէր, թէ արաբի թիւթի վրա են գրված նրա խոստումները: Բայց եթէ սուլթանը չի կամենայ արգարացի լինել և չի բարեհաճի վերաբերվել հայերին սրտակից կերպով, այն ժամանակ ամենալաւ օրէնքն ես անօրոտ կը մնայ: Այն ժամանակից, որ գոյութիւն ունի թիւրքիսն, միակ միջոցը ներգործելու նրա վրա՝ թէ մեզ և թէ բոլոր եւրոպական պետությունների համար իրան՝ սուլթանի վրա ներգործելն է:

«Բայց եթէ սուլթանը չը համոզվի—իսկ Կ. Պոլսից ստացված անգղիականները միթիւարական չեն—ուրեմն ինչով այդ բոլորը կը վերջանայ: Այդ հարցին ես կը պատասխանեմ, որ թիւրքաց կառավարութիւնը, չը նայելով պետու-

թիւնների բոլոր դաշնագիրներին և խորհուրդներին, ինքն է դնում զէպի ճակատագրական անդունդը: Բայց չը պէտք մտանալ, որ գոյութիւն ունի և մեծ պետությունների հեղինակութիւնը: Արդէն կէս դար առաջ մեծ պետությունները համոզվեցին, թէ անհրաժեշտ է կանոնաւորել թիւրքաց գործերը, և ես չեմ կարծում, որ նրանք այժմ այլ կերպ մտածէին: Թիւրքիայի անկման վտանգը ոչ թէ այն հետեանքները կը լինեն, որ նա կարող է առաջ բերել թիւրքիայի նահանգներում, այլ այն, որ հրեշտը կարող է արածվել ուրիշ երկրներում և ընդհանուր եւրոպական խառնակութեան պատճառ դառնալ:

«Այդ կարծիքն ունենալով, մենք միշտ պաշտպանում էինք թիւրքիայի ամբողջութեան բաղադրութեամբ: Այդ վտանգը, սակայն, վերացված չէ և ապագայում: Կարող է պատահել, որ որ և է պետություն յետ կը քայլի ընդհանուր համաձայնութիւնից և կը կամենայ գործ իր կերպ վճել: Ես բաղաւոր եմ, որ կարող եմ ասել՝ այդ չի պատահի: (Ազգային ծախսարկութիւններ): Ես կարծում եմ, որ պետությունները միաբան կը լինեն ընդհանուր եւրոպական գործի շահերը և նկատի ունենալով: Մի ուրիշ վտանգ կարող է առաջանալ սուլթանի խորհրդատուներից, եթէ նրանք կերակայեն, թէ կարող են ամեն բան անպատիժ կատարել:

«Բայց դա մեծ մոլորութիւն կը լինէր: Ես կարծում եմ, որ պետությունները վճեցին թիւրքիայի վերաբերմամբ միաբան գործը: (Տրամադրութիւններ): Թէ ինչպէս կը գործեն նրանք, ես չեմ կարող նախագուշակել—ես չեմ կարող գիտենալ, թէ ինչ կը պատահի, բայց ոչ ոք չէ կարող ասել, որ պետությունները խաղաղ են զէպի մարդկանց տանջանքները: Բանակցութիւնների ժամանակ ոչինչ ինչ այնքան չապեցրեց, ինչպէս պետությունների հաստատ որոշումը՝ չընդհատել իրանց միաբան գործունէութիւնը միակ ընդհանուր և ազնիւ նպատակներ հասնելու համար—քրիստոնէութեան խաղաղութեան: (Տրամադրութիւններ): Կա շատ ուրախակի երևոյթ է: Ես յոյս ունեմ, որ գործունէութիւնների այդ սեստեմը վերջ կը գնի զին աւուր ված իսաղապէս թէ ան»:

ԱՆԳԼՈՒԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ ԵՒ ՀԱՅՈՑ ՀԱՐՅՈՒ

Կ. Պոլսից ստացված այն տեղեկութիւնը, թէ բոլոր պետությունների ղեկավարները զիսկեցին Բ. Գրանը առաջարկելով նրան իրական միջոցներ ձեռք առնել խառնակութիւնները ճնշելու համար փոքր Ասիայում, զանազան բացատրութիւններով ատիժ է տալիս անգլիական մամուլին:

«Morning Post» լրագիրը կարծում է, որ ղեկավարները սարսափելի պատասխանատուութիւն յանձնեցնում են և հանդէս եկան մի սպառնալիքով: Եթէ միտքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ թիւրքիայի գրաւումը: Պատրաստ է արդեօք Անգլիան մասնակցել այդ ձեռնարկութեանը, հարցնում է լրագիրը: Եթէ պատրաստ չէ, ուրեմն հասել է ժամանակը որոշ կերպով յայտնելու այդ բանի մասին:

Այս թւերը մենք քաղած ենք Կ. Պոլսի մաքսային վարչութեան հրատարակած վիճակագրից, և վերաբերում են 1890 թվին:

Միւս կողմից Կ. Պոլսի Office sanitaire de Constantinople (առողջապահական պաշտօնարան) որ կիսաբերօպական է, հրատարակած է Statistique générale de la navigation dans les ports ottomans (Ընդհանուր վիճակագրութիւն նաւային շարժման՝ Օսմանեան նահանգայիններում) որի համեմատ Տրապիզոնի նահանգիցիսը 1891 թվին մտել են 517 չորեմուտ, որոնց 124-ը օսմանեան դրօշակով, 110 Ֆրանսիական, 106 անտրիակիան, 104 ռուսաց, 23 անգլիական, 37 յունական, 3 զեմանական և այլն: Եւ 9013 առաջատանաւոր զրեթէ բացառապէս օսմանեան դրօշակով, միայն 35 հատ կայ ռուսական:

Քանի որ մենք թրքական (կամ կիսաբերօպական) պաշտօնական վիճակագրութիւնը յիշատակեցինք, վեր առնենք զրանից մի քանի թւեր ևս երկրի անտեսական վիճակի մասին, որ զուրկ չէ հետաքրքրութիւնից:

Տրապիզոնի վիլայէթի սուրբերի ընդհանուր գումարը կազմում է 350,000 ոսկի կամ 3 միլիոն ռուբլի, չը հաշուելով զեռ մաքսատան եկամուտը, որ մի խոշոր գումար կը կազմէ: Եւ այս պատկառ-

«Daily Graphic» լրագիր կարծիքով, ղեկավարների արած քայլը կրկին հերթական է դարձնում արեւելեան հարցը: Եթէ այդ քայլը—նկատում վերոյիշեալ լրագիրը,—որ և է նշանակութիւն ունի, այդ այն է, որ պետությունները վճեցնեն մի անգամ ընդ միշտ վերջ դնելու այժմեան զժուարկութիւններին: Այդ քայլը նշանակում է, որ Ռուսաստանը պէտք է դրաւի Հայաստանը:

«Morning» լրագիրը աւելի էլ որոշ լեզու է բանեցնում և ասում է, որ ներկայ ժամը դրուժիչը դուրս գալու միակ ճանապարհն է փոխադարձ համաձայնութեան վրա հիմնված եռանդուն միջամտութիւնը:

Մի քանի լրագիրներ մասնացոյց են անում Արեւելքում սկսված բարբութիւնների վտանգի վրա: «St. James's Gazette» լրագիրը երկիւղ է յայտնում, որ իւրաքանչիւր փորձ վճեցնել թիւրքաց կայսրութեան այն մասերի վիճակը, որոնց մասին այժմ բանակցութիւններ են կատարվում, անպատճառ երևան կը հանի այն շահերի տարբերութիւնը, որոնք առայժմ գոյութիւն ունեն պետությունների մէջ ծածուկ դրութեամբ:

«Leeds Mercury» համարում է ներկայ դրութիւնը շատ անորոշ: «Viz» անգամ նրանք, որոնք ամենից լաւ տեղեկ են թիւրքիայի և Չինաստանի անցքերին, ներկայ կրիտիկական վարկեցում, ասում է լրագիրը—չեն վտանահատում նախագուշակել, թէ ինչ կը լինի այդ չափազանց վտանգաւոր խաղի ամենամօտ վախճանը, որին մասնակցում են եւրոպական և ասիական պետությունները:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հրատարակչական ընկերութիւնը այս օրերս լոյս է ընծայել բժիշկ Վասան Արծրունու «Կըզրոցական առողջապահութիւն» անունով աշխատութիւնը: Կա մի ձեռնարկ է մանկավարժների դպրոցական վարչութիւնների համար, և իբրև մի ամփոփ աշխատութիւն դպրոցական առողջապահութեան մասին կարելի է ասել, առաջինն է մեր բժիշկական—դպրոցական գրականութեան մէջ:

Հեղինակը այդ աշխատութեան մէջ խօսում է դպրոցական չէքի, նստաբանների, ուսուցման եղանակի, դպրոցական հիւանդութիւնների, ֆիզիկական կրթութեան, առողջապահական-բժշկական վերահսկողութեան մասին: Վերջին հարցի վերաբերմամբ հեղինակն առաջարկում է մեր դպրոցական վարչութիւններին մի ծրագիր, որը իր գործնականութեամբ միանգամայն նպատակաշարժն է իրագործելի է, բաւական է միայն, որ մեր հոգեւոր իշխանութիւնը տրամադրութիւն ցոյց տայ ուշադրութեան առնել այդ ծրագիրը: Եւ այդ ծրագրի իրագործումը մի անյետաձգելի կարիք է, եթէ ի նկատի ունենանք այն սարսափելի փաստերը և իրողութիւնները, որոնց հեղինակը առաջ է բերում հարց եկեղեցական-ձիական և թեմական դպրոցների կեանքից: Փաստերից երևում է, որ մեր դպրոցների

(Թիֆլիսի) հակառակական և հակամանկավարժական անտանիկի պայմանների հնորհիւ, հիւանդացու աշակերտները կազմում են 40—78%:

Խորհուրդ ենք տալիս մեր բոլոր դպրոցական վարչութիւններին ձեռք բերել «Գաղտնական առողջապահութիւն» և աշխատել իրագործել հեղինակի առաջարկութիւնները: Գրքի գինն է 50 կոպէկ:

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 2-ին

Այս բողոքի կրկնակցից ստացված մի մասնաւոր նամակից շտապում ենք հաղորդել հետաքրքիր մասերը, որոնք վերաբերում են այնտեղ պատահած վերջին խառնակութիւններին:

«...Ամբողջ չուկան գոց է, բոլոր ապրանքները աւար առնուեցան. կոտորածը ընդհանուր է, թէ զիւր, թէ քաղաք բոլորն ալ մերկ են, եզ, կով, ոչխար, թէ ուտեստ կամ այլ ինչ՝ ամենքն ալ աւար գնացին: Քաղաքէն 90 սպանված և 190 ալ վիրաւորեալ: Մանրամասնութիւնը չը գիտեմք, որովհետ 15 օր է, որ տներում մէջ գոցուած ենք... Գիւղական կոտորածէն թէև լուր չունինք, բայց զիւրերը շատ սարսափելի է կրակն: Վերջապէս ամեն կողմ ա՛ն ու սարսափ, ամեն կողմ թշուառութիւն, մերկ, անօթի, բոկանս ժողովուրդը փողոցները դռնէ ի դուռ կը թափափի, տեսնեմք Աստուած ինչ կը պարգեւէ... Կէպքի օրը հոկտեմբերի 9-ին էր, երկինքն ալ կարծես այդ օրը սև էր»:

ՆԻԿ. ՍԱԹ.

ՆԱՄԱԿ ՄՍՍՎՍՍՅՈՒՆ

Հոկտեմբերի 27-ին

Ռուսմեական տարին սկսվելու հետ միասին կովկասից և մինչև անգամ Պարսկաստանից սկընդեցին լցնել համալսարանական քաղաքները նստաւար աւսանողներ և աղատ ուսնողները: Կըրանցից շատերը գալիս են առանց որ և է նիւթական միջոցի. ոչ փող՝ ոչ էլ նոյն իսկ շատ անգամ օրինաւոր հազուստ: Զուրկ լինելով ուսման վարձը տալու միջոցից և չունենալով սպորտափ համար փող, այդպիսիները ստիպւած են լինում դիմել ընկերներին, «Ռուսաղական կասապին», որը Մոսկվայում հայ ուսանողների մէջ հաճա 40 տարի է ինչ գոյութիւն ունի: Այդ «կասապին» ամեն տարի մուտք ունի երկու-երեք հազար ռուբլի և այնքան էլ կը, ուրեմն այդպիսով, երբ ուսումնական տարին սկսվում է, կլասսայում ոչինչ չէ լինում, և եթէ լինում է՝ մի երկու, կամ երեք հարիւր ռուբլի, ոչ աւել:

Բայց բանը նրանումն է, որ փողի ամենահարկաւոր ժամանակը հէնց ուսումնական տարվայ սկիզբն է, երբ գալիս են նորաւարտ ուսանողներ ու դիմում կլասսային: Գիտողների թիւն էլ տարուց տարի աւելանում է, որովհետեւ Մոսկվայի համալսարանի հայ ուսանողների թիւն էլ արագ կերպով աճում է: Այդպէս, օրինակ, այս անգամ «կասապից» պահանջում էին միանգա-

կաչ, բայց մանաւանդ ալ իւր . . . 1— >

Մնացած երկիրները . . . 43/4 >

Գումարը . . . 20 միլիոն ֆրանկ

Իսկ Հայաստան իր կողմից ուղարկում է Տրապիզոնի վրայով մօտ 10 միլիոն ֆրանկի ապրանք, այսինքն:

Ոչխար, եզ և կով (Թիւրքիա, յատկապէս Պոլիս . . . 1.500.000 ֆ.

Ծխախոտ (Թիւրքիա, Հօլլանդիա և Անգլիա) . . . 1.250.000 >

Կաշին (Ռուսաստան և Անգլիա) . . . 1.000.000 >

Ընկուղի կոճղ—loupes (Ֆրանսիա) . . . 900.000 >

Լուբիա (Ֆրանսիա և Թիւրքիա) . . . 800.000 >

Աձի թօրթ (Ֆրանսիա և Աւստրիա) . . . 700.000 >

Միմիդը, կտուտ, թիֆթիք, բուրդ, բանջարեղէն, ձկնեղ, մեղրամոմ և այլն. . . 4.000.000 >

Գումարը . . . 10.150.000 ֆրանկ

Այս յիշածները միայն Տրապիզոնի միջոցով եղածներն են, որովհետեւ Հայաստանի բուն կամ աւելի մերձաւոր նահանգները Մամուսն է, որի վրայով ստանում է տարեկան 20 միլիոնի ապրանք և արտահանում է 26 միլիոնի:

նը պատրաստել և դիւրացնել ուսուական սահմանադրելի հետ: Գժուար չէ գուշակել պատճառները: Եւ որքան ազմուկ ու զժուարկութիւններ կանոնաւոր ճանապարհ չինելու համար: Տրապիզոնից իջրում տանող մեծ ճանապարհը սկսած է շինվել 1856-ին և վերջացած ու բանուլու սկսած է 1872-ին: Ուրեմն 314 քիլօմետր կամ 300 վերստ ճանապարհը չինված է 16 տարում: Մեծ արագութիւնով մօտ ծովեզրայ կերպուսուէրը քաղաքից զէպի ներս, մինչև կարահիսար քաղաքը 120 վերստ ճանապարհը չինված է 18 տարում, իսկ Օրդուից, որ նոյնպէս մօտակայ ծովեզրայ քաղաք է, մինչև Սերաստիա ճանապարհ չինելու ժամանակ, առաջին 9 վերստ տեղի համար 13 տարի է գործածված: Գեռ կատարելապէս վերջացած էլ չէ—21 տարի է հարկաւորած (1862—1883) Մամուսից Սերաստիա՝ 50 վերստ ճանապարհ չինելու համար:

Այս թւանշանները սքանչելապէս ասպարուզանում են, թէ ինչ արագութեամբ է գործում թիւրքիան՝ երկրի մէջ կանոնաւոր հարողակցութիւն ստեղծելու համար:

Ականատես

մին մօտ 700 բուրլի և բացի դրանից կհասան՝ սկսած է իր հաշուով մօտ 10 մարդ պահի մի ամբողջ տարի: Մերժել նորակ ուսանողների այդ պահանջը՝ անկարելի է, այդ կը նշանակէ զրկել նրանց համալսարանից: Եւ ահա այդպիսով ուսանողների առաջ դրած է մի այդպիսի դժուար լուծելի հարց. որտեղից փող գտնել և օգնել չքաւոր ընկերներին: Եթէ ամեն մարդ իրաւ մարդ լինէր, այդ բանի ամենալաւ նշանակութեամբ, այն ժամանակ ուսանողները տարակուսանքի մէջ չլինէին ընկին: Ինքնիրոք դատեցէք, նախկին ուսանողները պարտ են կհասային՝ մօտ 15 հազար բուրլի: Եթէ այդ ահազին գումարի գոնէ տասներորդ մասը վերադարձնէին, ահա և կը վճովէր այն հարցը, որը այժմ ի դուր աշխատում են վճուել Մոսկովայի ուսանողները: Մակայն պարտք առած փողերը վերադարձնող համարեա ամենին չը կայ:

Ինչպէս վերև ասեցինք, կհասային՝ պարտ են մօտ 15 հազար բուրլի: Միծաղելի է ասել. այդ գումարից անցեալ տարվայ ընթացքում վերադարձրել են ընդամենը... 180 բուրլի, որից հարիւր բուրլին մի անձնաւորութիւն է միայն տուել: Երկարաբանելը, կարծում ենք, աւելորդ է. վերջին փաստը բաւական է նախկին ուսանողներին շատերի այժման բարոյական պատկերը տեսնելու համար: Իսկ եթէ ցանկացող լինի այդ վերին աստիճանի անբարեխիղճ պարսկների ազգամուտներն իմանալ, թող զայ Մոսկովա և նա ուսանողներից կը ստանայ մի շատ մեծ ցուցակ: Եւ այդ ցուցակի մէջ նա կը տեսնի այնպիսի անուններ, որոնց այժմ այն կամ այն քաղաքում պատուաւոր անձնաւորութիւններ են համարում, և չքեղ սարում են: Եւ այդ ինչ ժամանակ: Այն ժամանակ, երբ իրանց հայրենակիցները, իրանց ընկերները, հեռու հիւսիսում ոչ թէ չքեղ, այլ ամենահամեստ սարկուտ միջոցից էլ գուրկ են:

Ա՛յ է մեղաւորը: Մեր խորին համոզմունքով հէնց այդ անարժան մարդիկ: Չէ որ, պարսկներ, թէ՛ զուր կհասայինց՝ փող չառնէիք, այդ փողը կը մնար իր տեղում և այժմ ձեր տեղը ուրիշը կը ստանար, գոցէ ձեռքանից շատ և շատ արժանաւորը: Եթէ այժմ Մոսկովայում կան երկուստարգներ, որոնք սարկուտի համար ամեն տեսակ ներդրութիւն են կրում, իմացէք, որ դրանց այդ ներդրութեան մէջ գոյողը դուք էք: Գուր վերցրիք դրանց կօտէկները, այդ չքաւորների հացի փողը, և եթէ դրանք այժմ ստիպված կը լինեն թողնել համալսարանը և այդպիսով գուրկ մնալ թողութիւնից, կրթութիւնից, որի անարժան աղէտները դուք հանդիսացաք, դրա մեղքը միայն ձեզ վրա է: Եւ դրանք թէ՛ այդ ձեր խայտառակ վարմունքը ինչ անուն ունէ, վերցնել պարտքով փող ու յետոյ չը վերադարձնելը — այդ կը նշանակէ ոչ թէ միայն երգմանազան լինել իր խօսքին, այլ և գոյ լինել: Միթէ այդ ձեր վարմունքին կարելի է մի ուրիշ անուն տալ: Միայն նա չէ գոյող, ու գիշերով ծածուկ է գողանում, այլ և նա է գող, ու մի բան է վերցնում, նախօրք քաջ գիտեմալով, որ այդ բանը չէ վերադարձնելու: Եւ դուք ամենաստոր գողերիցն էք, դուք գողացել էք, կողոպտել էք ոչ թէ հարուստին, այլ աղքատին, այն էլ ձեր աղքատ ընկերներին:

Կրմն ձեր դէմ դատարանին՝ ուսանողները չեն ուզում: Նրանք դիմում են աւելի խիստ դատարանին՝ հասարակական կարծիքին և ձեր խորին, եթէ միայն այդ վերջինը ձեր մէջ դեռ գոյութիւն ունի: Ուսանողները կարող են հրապարակ հանել ձեր անունները և հաւատացած եղէք, որ վաղ թէ ոչ դուք կը կարգաք ձեր անունները լրագրի էջերում, իսկ այդ հարկ թէ ձեզ համար դուրեկան լինի:

Ուստի ինչեցէք ձեր բարոյական սարտականութիւնը, ինչեցէք համալսարանում անցկացրած ձեր օրերը, այն սուրբ իրէպները, որոնց պայտպան էիք հանդիսանում ուսանողական առգիտօրիաների մէջ: Միթէ կհանրի սրօղ ան վերջնականապէս ոչնչացրել է ձեր մէջ՝ ձեր ամենալաւ ձգտումները, մեղքերը է ձեր մէջ ուսանողին: Ահա եկել են Մոսկովա նոր ուսանողներ, դրանք նիւթական միջոցից գուրկ են և դրանց սկսած է օգնէ այն կհասան, որը մի ժամանակ օգնում էր և ձեզ, բայց կհասան՝ այլ ևս փող չունին: Ուրեմն միթէ այս անգամ էլ այնքան անխիղճ կը լինէք, որ անուշադիր կը թողնէք այս հրաւերն էլ: Չեք կարող

կամ թէ չէք ուզում միանգամից վերադարձնել ձեր պարտքը, գոնէ մաս մաս յետ տուէք, այդքանի համար էլ ձեզանից չնորհակալ կը լինենք: Այլ կաճկաճեանց

ՆԱՄՍԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՍԻՑ

Հոկտեմբերի 31-ին

Մի քանի շաբաթ առաջ գաւառապետը առաջարկել էր մեր հասարակութեան՝ Վաղարշապատ գիւղը քաղաք դարձնելու. սակայն հասարակութիւնը իր ոյժից բարձր համարելով քաղաքի ծախքեր հոգալը և, որպէս զիւղական ժողովուրդ, միանգամայն կապված լինելով հողի արդէւնաբերութեան հետ, չը համաձայնէր այս առաջարկութեանը և ամսիս 29-ին ներկայանալով գաւառապետին, մերժեց այդ հարցը:

Հոկտեմբերի 29-ին նշանակված էր զիւղական աստուտերի ընտրութիւնը: Մեր աստուտերը, որ զիւղական լեզուով կոչվում է զլա վին, պէտք է կառավարէ ոչ թէ միայն Վաղարշապատ գիւղը, այլ և նրան շրջապատող 4—5 գիւղեր ևս, այս պատճառով ժողովվել էին թէ Վաղարշապատի և թէ նրա շրջակայ 4—5 գիւղերի հասարակութիւնները, որ ձայների բազմութեամբ՝ ընտրեն մի աստուտէր: Սակայն 10—12 ժամ արժուկներ հանելուց յետոյ ցրվեցին, չը կարողանալով ընտրութիւն անգամ կայացնել:

Կրա պատճառը բաւական պարզ և հասկանալի կը լինի, եթէ մի կողմից աչքի առաջ ունենանք զիւղական աստուտերի պարտականութիւնը և նրան տուած իրաւունքները՝ հասարակութիւնը կառավարելու գործում, իսկ միւս կողմից — այն անձնաւորութիւնները, որոնք առաջարկվում էին: Առաջարկված թեկնածուներին հասարակութիւնը ճանաչում է թէ անձամբ և թէ գործով. դրանցից շատերը նոյն պաշտօնով տարիներ ընթացքում ծառայել են հասարակութեանը և ոչ մի օգուտ չեն տուել, բայց միայն զիւղական ծախքը հարկւնելից մի քանի հազարի բարձրացնելով, և հետևապէս զիւղացու տարեկան հարկը աւելացնելով: Այնու ամենայնիւ, այսօր մեր հասարակութիւնը, փոխանակ համբարակութեամբ արժանաւոր աստուտէր ընտրելու, ընդհակառակը մի քանի խմբերի է բաժանվել և խմբերից ամեն մէկը, անձնական և թէ՛ նամական հաշիւներով կուրացած, աշխատում է ոչ այնքան արժանաւոր աստուտէր ընտրելու, որքան իր կիրքը առաջ տանելու և հակառակ խմբի թեկնածուին ոչնչացնելու: Նոյն խմբերը, զանազան ջնջին պատճառներից զըրգված, միմեանց դէմ կուր են մղում, միմեանց ձեռնում են, իսկ մեր զիւղի այժմեան աստուտէրը, փոխանակ հասարակութեանը խաղաղեցնելու, և կուրցնելով բաժանելու, ընդհակառակը ինքն էլ կուր մէջ է մտնում:

Եւ զարմանալի չէ, որ այսպիսի պայմաններում դուրս են գալիս ամեն տեսակ թեկնածուներ և միմեանց զըրկ կտարելով աշխատում են ձեռք բերել աստուտէրի պատասխանատու՝ և մեծ բարեխիղճութիւն պահանջող պայտճուր:

Ա. Օճանջանեան

ՆԱՄՍԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆ

Թիֆլիս, նոյեմբերի 6-ին

Ի հերքումն «Մշակի» հոկտեմբերի 26-ի համարում՝ Լըզրումի հայերի կոտորածի մասին տպած հեռագրի, պատիւ ունեմ ինչդրել տպագրել առաջիկայ համարներից մէկում հետևեալը:

Մի քանի զինված հայեր յարձակվեցին Լըզրումի ընդհանուր նահանգապետի և ժամգործարարի զլխաւորի վրա. նրանց վրա արձակած զընտանի հարուածից սպանվեց մի ենթասպայ: Այդ յանդուգն սպանութեան փորձը ընդհարում առաջ բերեց հայ և մասնատական աղաքանալիութեան մէջ, բայց իշխանութիւնների անմիջապէս ձեռք առած ազդու միջոցների շնորհիւ, խախտարարները ցրվեցին և հանգստութիւնը վերականգնվեց:

Թիւրքաց ընդհանուր հիւպատոս՝ Կասպ

ՆԱՄՍԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆ

Թիֆլիս, նոյեմբերի 7-ին

«Մշակի» № 125-ի մէջ տպագրված էր Ներսէս քահանայ Ղամաղեանի նամակը, որպէս պատասխան իմ գրածի, որ հրատարակվեց «Մշակի»

№ 119-ի մէջ: Այդ նամակով իմ ասածները իրօք հերքված չեմ համարում, տխուր իրողութիւնը՝ մնում է իրողութիւն, ուստի և երկար բանակութի առիթ չը տալու համար՝ վերջ եմ տալիս այդ կէտին:

Սակայն Ղամաղեան քահանայի նամակի մէջ մի ուրիշ կէտ կայ, որը անուշադրութեան տալ չեմ կարող: Գա 100,000 բուրլու կտակի կտրուցիւնը՝ Նամակագիր «Կանոթը» այդ կտակի մասին տեղեկութիւն չունի և Ղամաղեան քահանան, ինչպէս երևում է, չը գիտէ, թէ իր օր «Կանոթի» հետ գործ ունի, այնպէս չէր թողտայ իրան այդպիսի անմիտ բան տանը:

Մենք Ղամաղեան քահանայից աւելի նախանձախնդիր ենք ազգային հաստատութիւնների անուամբ եղած կտակներին, ուստի որպէս զի եկեղեցին կորուստ չունենայ և խորքախտվեան հեղինակը պատժվի, հրաբրում եմ տեղական հողեր իշխանութեանը՝ պատասխանատուութեան ենթարկել Ղամաղեան քահանային՝ պահանջելով որ նա բաց անի երկրութիւնը այդ կտակի մասին:

Կանոթ

ՆԵՐՍԻՆ ԼՈՒՐԵՐ

Մենք արդէն հաղորդեցինք, որ մտադրութիւն կայ Գիւղատեսակեան ընկերութեան բաժին բանալ Գանձակ քաղաքում: Կառավարչապետը հաստատեց բաժնի բացումը: Այդ մասին բոլոր զրադուրթները վերջացել է և կովկասեան Գիւղատեսակեան ընկերութիւնը սրուել է առաջարկել իր անդամներին մի քանիսին գնալ Գանձակ ներկայ լինելու բաժնի հանդիսարար բացման, որ երեք տեղի կունենայ առաջիկայ կիրակի օրերը մէկուս: Շնորհաւորում ենք քահանակեցիներին և ցանկանում ենք, որ նրանք լուրջ վերաբերվեն դէպի այդ նոր օգտակար հիմնարկութիւնը և աշխատեն նրա միջոցով բարձրացնել իրանց նահանգի անտեսական դրութիւնը:

Վերջին հեղեղից առաջացած աղէտը աւելի մեծ է, քան թէ ցոյց է տալիս մեր Անդրկովկասեան երկաթուղու վարչութիւնը: Կվերլի կայարանի կամուրջը փուլ գալիս, գետի մէջ թափվել են բազմաթիւ ուղևորներ և մօտ 16 հոգի խեղդվել են: Ահա ինչ է պատում այդ մասին մի ակադեմիկ Բախումի «Черноморскій Вѣстникъ» լրագրի մէջ: Եւս ականատես էի աղէտին. 120 ուղևորներ անցնում էին ոտով Կվերլի Ֆեասված կամուրջի վրայով, երբ յանկարծ փուլ եկաւ կամուրջը և ուղևորները թափվեցին Կվերլի գետը: Թէ ինչպէս ինձ աջողվեց անցնել կամուրջը և ազատվել — այդ Աստուած գիտէ: Սարսափելի տեսարան էր: Ատու էն, որ մինչև 16 հոգի խեղդվել են: Իմ աչքի առաջ ողբ, լաց, աղաղակ, օգնութեան ձայներ, մէկը հօրն էր որոնում, միւսը երեխաներին: Տպագրելով այս լուրը, Բախումի լրագրից շատ իրաւացի նկատում է. «Ինչի է լուում անդրկովկասեան երկաթուղին: Ինչ բարոյական իրաւունք ունի նա ծածկել այդ աղէտը»:

Ամսիս 7-ին, երեքշաբթի, Թիֆլիսի արքունական թատրոնում կայացաւ «Հուզէնօսներ» օպերային ներկայացումը՝ ի նպատակ կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան: Մարգարիտա-Աննա ժուա թագուհու դերը աջողութեամբ կատարեց տիկին Մարյադ, իսկ Վալէնտինայի դերը կատարող տ. Լենկվիտա այնքան գեղեցիկ կերպով խաղաց, որ հասարակութիւնը մի քանի անգամ առանձին դուրս կանչեց և երկար ծափահարութիւններով վարձատրեց: Մարյադի դերում Օստրովիովը նոյնպէս մեծ աջողութիւն ունեցաւ: Չը նայելով բարեգործական նպատակին, թատրոնը միայն երեք քառորդ մասով լի էր: Արդիւնը եղել է 710 ռ., ծախս 410 ռ., զուտ հասույթ 300 բուրլի:

Ներկայ նոյեմբերի վերջը գինու վրա ակցիոյ դնելու ծրագիրը կենթարկվի մանրամասն քնննութեան ֆինանսների մինիստրութեան մէջ:

Այս օրերս լոյս տեսաւ Պարիզում մի գիրք, որ իր վրա դարձրեց ոչ միայն մասնագետներին, այլ և լրագրիչների ուշադրութիւնը: Գա օգուտը Տուլուզի հեռագրութիւնն է խելագարութեան պատճառների մասին, որ կրում է «Les causes de

la Folie» վերնագիրը: Այդ գիրքը պարունակում է իր մէջ այն բոլորը, ինչ որ մինչև այժմ գիտնականապէս պարզված է խելագարութեան և հոգեկան հիւանդութիւնների մասին և այն դեռողութիւնները, որ արել է ինքը հեղինակը իր պարսպունակների միջոցին: Գիրքը աշխատում է վճուել մի շարք գործնական խնդիրներ և, մասնաւորապէս կարծիքով, մի դարադուրս է բացում խելագարների բժշկութեան արակտիկայի մէջ:

Մի ուսու կին՝ Լեբեզեվա, որ թարգմանել է թուրքերէն Պոչկիւրի և Լեբոնուսովի գրուածքները, այժմ թարգմանում է Տոլստոյի «Տէր և Մշակ» վէպը:

Մեր լրագրի № 124-ում լոյս տեսած Ազարեան պատրիարքի հեղինակ մէջ մի սխալ է մտել. նամակի տակը չէ գրված ստորագրութիւնը, որ է հետեւելը. «Բարտուղարութիւն հայ կաթողիկէ կաթողիկոսարանի»:

Ինչպէս յայտնի է, բժիշկ Խավկին գնացել էր Հնդկաստան՝ փորձեր անելու խօլերայի պատուաստման վրա ուղիղ այն տեղերում, ուր մշտապէս թագաւորում է խօլերան: Փորձերը մեծ աջողութիւն են ունեցել: Հիւանդութիւնը 18 անգամ նուազել է այն տեղերում, ուր պատուաստումը գործարկված է եղել: Պատուաստած 43,000 հիւանդների հետ ոչ մի փորձանք չէ պատահել պատուաստման միջոցին:

ԳԵՆԱԲԵՂԻՑ մեղ գրում են, «Հոկտեմբերի 29-ին այստեղի հիւանդոցի դահլիճում, սիրողների մասնակցութեամբ, առաջին անգամ մէկ հայերէն ներկայացում տրվեց, յօգուտ ծխական ուսումնարանի: Խաղացին Եւսեպի թուրքը: Խումբը երկուց մի քանի կտոր ժողովրդական երգեր Զէյթունի շրջանով: Զուտ արդիւնք գոյացաւ 75 բուրլի: Հանդիսականները գոհ մնացին: Պատիւ ուսուցիչ Մինանեանցին, որը անխնայ կերպով աշխատեց թէ ներկայացումը զըրու բերելու և թէ երգեցիկ կոմբը պատրաստելու համար: Յանկալի էր, որ սրանով չը վերջանայ, այլ տարին գոնէ երկու երեք ներկայացումներ տըրվեն, որոնցից գոյացած փողը մեր աղքատ ուսումնարանի համար արդիւնքի աղբիւր կը լինէր և ժողովուրդը բարոյապէս կը մխթարէր»:

ՆԵՐՍԱՆԻՑ մեղ գրում են, «Վերջերս սաստիկ փոփոխական եղանակներ են լինում, երբեմն անձրևներ են տեղում, երբեմն փոթորիկներ բարձրանում և երբեմն էլ ցրտեր անում: Այն այդիներում, որոնք անբաղ էին մնացել, խաղողը սաստիկ լիառակեց: Նոր-Բայազետի կողմերում մեծ քանակութեամբ ձիւն է եկել»:

ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄՍԿ ԱՍՍԻՐԻՑԻՑ

Վ. Ի. Ե. Ն. և հոկտեմբերի 29-ին

Անցեալ կիրակի օր Միխիլարեան միաբանութիւնը տօնեց իր արքայօր՝ գերապայծառ Արաէն Այաթնիանի քահանայութեան յիմնադրումը: Իսկ այսօր մի հացկերպութ հաւաքեց համակրելի աղքատակոտորին մօտ նորա յարգողներէն շատերը, թէ՛ հայ և թէ՛ գերմանացի:

Անցեալ կիրակի օր առաւօտեան պատարագեց հայ Այաթնեան Վանքին եկեղեցիին մէջ հանդիսարար կերպով, ի ներկայութեան խուռն ժողովուրդի, ի հարկէ, ամենամեծ մասամբ գերմանացի, որ մեծ ուշադրութեամբ հետեւեցաւ հայկական արարողութիւններին:

Նա որ ստէպ լսած է Արեւտեան եկեղեցւոյ երաժշտութիւնը և բաղադրած է զայն Արեւելաւորին հետ, պիտի խոստովանի, որ առաջինը անսխալի աւաւելութիւններ ունի թէ իբրև աւելի քաղցրաւոր և թէ աւելի մշակված. մինչդեռ վերջինը մի գեղարուեստական անկատար գործ համակրելի է, գոնէ և երօպական տեսակցից: Սակայն այն երաժշտութիւնը, որ ես լսեցի, թէ և հայկական, սակայն բարեխիղճ, եւրօպականին շատ մօտ բերված էր և այսպէս կարողացաւ թէ գոհացում տալ եւրօպացիներին և թէ հետաքրքրական և զուրիչ լինել, պահելով իր արեւելեան նկարագիրը: Երաժշտութիւնը թէ՛ ձայնակն և թէ՛ գործիական էր և մասնաւոր մի քանի մեղեդիներ իրանց ներգահանակութեամբը

